**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**20.11.2019թ. կնքված N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն**
**ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի**

Ք. Երևան <<05>> Նոյեմբեր 2020թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Յու. Ջավադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.04.2020թ. N 566-Ն որոշումը և 20.11.2019թ. կնքված N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/5-Ն ծածկագրով գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքները շարունակել իրականացնել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից:

1.2 Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ին <<Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> N 298-Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում աշխատանքների անհնարինությունը կարգավորվում է Պայմանագրի 6-րդ կետով:

1.3 Պայմանագրի N 2 Հավելվածի <<8 248 500>> թիվը փոխարինել <<24 745 500>> թվով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորրությունների ողջ ծավալով կատարումը: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Ջրային կոմիտե | <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ |
| ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա | ք. Երևան, Վ.Վաղաշյան 12 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | հեռ.՝ 010 27 36 60 |
| Հ/Հ 900011034197 | էլ.փոստ awd@hjni.am |
| ՀՎՀՀ 02555816 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող | Հ/Հ1150000088680300 |
| | ՀՎՀՀ 00012859 |
| | Տնօրեն |
| ________ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ | ---------------- ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ. Տ. | Կ.Տ |